ԼՐԱՏՈՒ

ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԹԵՈԴՈՍԻԱՅՈՒՄ

Մինչև վերջին տասնամյակը Ղրիմի հայկական հուշարձանները համարյա չեն ենթարկվել հնագիտական ուսումնասիրություններին։ Գիտականները հիմնականում բավարարվել են հուշարձանների լոկ արտաքին նկարագրություններով և դրանց հիման վրա արված մասնակի եզրակացություններով։ Երբ Օ. Դոմբրովսկու ղեկավարությամբ ստեղծվեց Ղրիմի հնագիտական կենտրոնը, առանձին ուշադրության արժանացավ նաև հայկական հուշարձանների հետազոտության հարցը։ Ասածի լավագույն ապացույցը ս. Խաչ վանքի հնագիտական ուսումնասիրությունն է (անավարտ)[1]։

Վերջին շրջանում հուշարձանների ուսումնասիրություններ և պեղումներ համարյա չեն կատարվում։ Միայն Բոգատոյե գյուղի ս. Ամենափրկիչ եկեղեցու շրջակայքում վերանորոգման նախագիծ կազմելու նպատակով հետազոտական պեղումներ են կատարվել, իսկ վերանորոգող էարտարապետները մաքրել են հուշարձանի տանիքը, որի հետևանքով հայտնաբերվել է տանիքի ծածկի տակ թաղված շատ հետաքրքիր մի համակարգ։

Թեոդոսիա քաղաքի «Արգելանոց» կոչվող թաղամասը, որը տարածվում էր շենովական պարիսպներին կից, դեռ միջնադարում պարսպապատված էր «Հայկական» պարսպով, որի ներսում պահպանվել են ճարտարապետական հուշարձանները։ Հայկական թաղամասի կառուցումը շենովական պարիսպներին կից, գալիս է ասելու այն կապերի մասին, որոնք գոյություն ունեին հայերի և իտալացիների միջև։ Այդ կապերի ուսումնասիրության լավագույն աղբյուր է շենովական նոտարական ակտերի մանրամասն վերլուծությունը[2]։ Դա հնարավորություն է ընձեռում ավելի հանգամանորեն ծանոթանալու ղրիմահայ գաղութի կյանքին, մշակույթին, պատմական հուշարձաններին։

1982 թ. Թեոդոսիայի հայկական հուշարձանների թիվը համալրվեց ևս մեկ կառույցով, որը հայտնաբերվեց «Հայկական» պարիսպի արևելյան հատվածի մոտակայքում։ Հուշարձանը գտնվում է պարսպապատված տարածքի ամենաբարձր տեղում։ Կառուցման ժամանակը պարզ չէ։ Ճարտարապետական ձևերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք որոշ չափով հատկանշական են ղրիմահայ ճարտարապետական դպրոցի վաղ, այսինքն՝ XIV դ. համար (Նկ. 1)։

Եկեղեցին փոքր թաղակապ կառուցվածք է։ Արևելյան աբսիդը դուրս է ընդհանուր ծավալից։ Ներսի չափերն են՝ 4,45 մ×8,88 մ։ Պատերը բավական հաստ են և ստորին շարքերում ունեն լայնացում, հատկապես՝ հյուսիսային և արևելյան ճակատներում։ Ավագ խորանը մեծ է (2,88 մ×3,32 մ)։ Արևելյան պատի վրա պատուհանի բացվածք կա (58 սմ), որը ժամանակին շարվել է։ Պատերը շարված են եղել կոպիտ, անմշակ, տրախիտ հիշեցնող տեղական քարից։ Միայն մի քանի տեղերում կան մաքուր տաշված քարեր՝ մկրտարանի շուրջը, մուտքերը, աստիճանները (Նկ. 2 և 3)։ Պահպանվել են երկու մուտքերը՝ մեկը հարավային պատի մեջ, մյուսը՝ արևմտյան։ Հարավային մուտքը համեմատաբար լավ է պահպանվել, ունի 128 սմ բացվածք։ Այս մուտքի ներսում տեղադրված են երեք աստիճան, որոնք իջնում են դեպի եկեղեցու հատակը։ Արտաքին պատերը թաղված են հողի մեջ։ Արևմտյան պատը քանդված է։

Որոշակի չէ եկեղեցու անվանումը։ Մեզ հասած պատմական նյութերի մեջ տեղեկություններ են պահպանվել Թեոդոսիայի հիմնական հայկական եկեղեցիների մասին։ Կարող ենք ենթադրաբար միայն ասել, որ վերջինս նշվածներից մեկն է։ «14-րդ դարի 40-ական թվականներից սկսած քաղաքում գործում են սբ. Հարություն, սբ. Ստեփանոս, սբ. Գևորգ, սբ. Օքսենտ, սբ. Սարգիս եկեղեցիները, Հայր Հովհաննեսի անվան մենաստանը»[3]։ Հատկանշական է, որ տասնյակ տարիներ առաջ այդտեղ շրամբարներ կառուցելիս բավական թվով հուշարձաններ են ավերվել։ Հայտնաբերված եկեղեցու արևմտյան կողմում պահպանվել է մի կիսավեր պատի մնացորդ,

---

[1] О. Домбровский, В. Сидоренко, Археологические памятники Крыма, Солхат и Сурб-хач, Симферополь, 1978.

[2] Վ. Ա. Միքայելյան, Հայ-իտալական առնչությունները, Երևան, 1974, Э. В. Даннлова, Армянская колония в Крыму в конце XIII в. (по данным генуэзских нотариальных источников 1289—1290 гг) («Пятая конференция по проблемам искусства Армении», Ереван, 1982, с. 303).

[3] Վ. Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 93։

որը, շատ հավանական է, այդ եկեղեցու դավթի պատն է։

Կասկածից դուրս է, որ կառուցվածքը և նրա շրջապատը կարող են մանրամասն հետազոտության, որը շատ հետաքրքիր և արժեքավոր նյութ կտրամադրի ուսումնասիրողին։ Այժմ հուշարձանը անմխիթար վիճակում է։ Պեղումների ժամանակ փորված խրամատներում հավաքված շուրը, ծծվելով հիմքերի տակ, շատ արագ քայքայում է հուշարձանը։ Պատերի վերին շերտերը տեղումներից խարխլված են։ Մուտքերի պահպանված աստիճանները և մկրտարանի քարերը

Նկ. 1



Նկ. 2

խիստ մաշված են. դա ենթադրել է տալիս, որ կառույցը, մինչև քանդվելը, բավական երկար ժամանակ գործել է։

Եկեղեցին համարյա հպված է արևելյան պարսպին, այնպես որ պաշարման ժամանակ այն խանգարող հանգամանք էր ամրոցը պաշտպանողների համար, որոնք չէին կարող պարսպի երկայնքով ազատ տեղաշարժվել։ Մնում է ենթադրել, որ եկեղեցին կառուցվել է ավելի վաղ, քան պարիսպը և, հավանաբար, պարսպի կառուցման հետ կապված քանդվել է։



Նկ. 3

Ջրամբարներից հեռու գտնվող պատերը համեմատաբար լավ են պահպանվել։ Հավանական է, որ ջրամբարները կառուցելիս եկեղեցու քարերը օգտագործած լինեն նոր շինարարության համար։ Նորահայտ պեղված այդ հուշարձանը կարոտ է վերականգնման-ամրացման բնույթի աշխատանքների։

ՅՈՒԼԻ ԹԱՄԱՆՅԱՆ